



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում 102/17 ծածկագրով իրականացված «Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ ջրամբարներում ջրընդունիչների ձկնապաշտպան կառուցվածքների նախագծման աշխատանքների ձեռքբերման» բաց երկփուլ մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

**Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ ջրամբարներում
ջրընդունիչների ձկնապաշտպան կառուցվածքների նախագծման
աշխատանքների բաց երկփուլ մրցույթ**

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն հիմք ընդունելով 2017 թվականի գնումների պլանը և Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը, կազմակերպել և անցկացրել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կարիքների համար Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ ջրամբարներում ջրընդունիչների ձկնապաշտպան կառուցվածքների նախագծման աշխատանքների գնման բաց երկփուլ մրցույթ: Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2017 թվականի մարտի 3-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2017 թվականի մարտի 13-ը: Հարկ է նշել, որ մրցութային փաստաթղթերում հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2017 թվականի մարտի 1-ն է:

Ըստ Ընկերության մրցույթի հայտերի գրանցամատյանի տվյալների, հայտ ներկայացրած երկու մասնակիցների՝ «Զրարբի» ՍՊԸ-ի և «ԳԻԴԷՊԻՆՎԵՍ» ՍՊԸ-ի հայտերը ստացվել են 2017 թվականի մարտի 1-ին:

2017 թվականի մարտի 13-ին կայացած տեխնիկական առաջարկների գնահատման նիստի ընթացքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացված տեխնիկական առաջարկները գնահատվել են որպես հրավերի և գնումների ուղեցույցի պահանջներին համապատասխանող և որոշում է կայացվել հաստատել ներկայացված տեխնիկական առաջարկները՝ մասնակիցներին հնարավորություն տալով մասնակցել էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին: Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

| Ընկերության անվանումը | Առաջարկած գինը, հազ դրամ՝ առանց ԱԱՀ |
|-----------------------|---|
| 1 | 2 |
| «Ջրարբի» ՍՊԸ | 24 600 |
| «ԳԻԴԵՊԻՆՎԵՍ» ՍՊԸ | 24 500 |

Հաղթող է ճանաչվել «ԳԻԴԵՊԻՆՎԵՍ» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 24 500 հազար ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:

«Քոնսուլտիվոնալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ ջրամբարներում ջրընդունիչների ձկնապաշտպան կառուցվածքների նախագծման աշխատանքներ» բաց երկփուլ մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. Մրցույթի հայտարարության և հրավերի մեջ նշված են հայտերի ընդունման տարբեր վերջնաժամկետներ: Հարկ է նշել, որ հայտերի ներկայացման նշված վերջնաժամկետը՝ մարտի 1-ը, սահմանափակում է հնարավոր մասնակիցների մրցույթին մասնակցելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, մոնիթորինգի ընթացքում պարզվել է, որ հայտերի ընդունման գրանցամատյանի համաձայն մասնակիցների հայտերը ստացվել են մարտի 1-ին՝ նախքան մրցույթ հայտարարելը:
2. Նախքան մրցույթ հայտարարելն Ընկերությունը չի իրականացրել շուկայի ուսումնասիրություն:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ քրամբարներում քրոնդունիչների ձկնապաշտպան կառուցվածքների նախագծում»

Գնման ծածկագիրը 102/17

Գնման ձևը Բաց երկփուլ մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|--|-------------------------------------|--------------------------|--------------------------|--------------------|
| 1 Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Չ/Ո | Մեկնաբանություններ |
|--|-------------------------------------|--------------------------|--------------------------|--|
| 2 Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | Համաձայն Ընկերության գնումների կարգի՝ Որոտանի ՀԷԿ-ի կայանների շահագործման և սպասարկման հետ ուղղակիորեն կապված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերը հաստատում և ստորագրում է Ընկերության արտադրության ղեկավարը: |
| 3 Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Զ/Ո | Մեկնաբանություններ |
|---|-------------------------------------|-------------------------------------|-------------------------------------|--|
| 4 Մինչև գնումների հրավերների հրապարակելը իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են) | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 5 Ձեռնարկվել են բավարար միջոցառումներ ոչ մրցակցային եղանակով գնումների ծավալը նվազեցնելու ուղղությամբ | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | Գնման մասին հայտարարությունը հրապարակված է միայն գնումների էլեկտրոնային տեղեկագրում և հատարարության մեջ հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվել մարտի 13-ը, Հարկ է նշել, որ հրավերում նշված է այլ վերջնաժամկետ՝ մարտի 1-ը, ինչը խոչընդոտ է հնարավոր մասնակիցների համար: |
| 6 Գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 7 Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Զ/Ո | Մեկնաբանություններ |
|---|-------------------------------------|-------------------------------------|--------------------------|--------------------|
| 8 Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 9 Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |

| | | | | |
|----|---|-------------------------------------|-------------------------------------|--------------------------|
| 10 | Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 11 | Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 12 | Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 13 | Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> |
| 14 | Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> |

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Զ/Ո | Մեկնաբանություններ |
|--|-------------------------------------|--------------------------|-------------------------------------|--|
| 15 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 16 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 17 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | Ընկերությունը շուկայի ուսումնասիրության տվյալներ չի ներկայացրել: |

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Զ/Ո | Մեկնաբանություններ |
|--|-------------------------------------|--------------------------|--------------------------|--------------------|
| 18 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը) | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

| Ստուգաթերթի պայման | Ա | Ո | Զ/Ո | Մեկնաբանություններ |
|--|-------------------------------------|--------------------------|-------------------------------------|--|
| 19 Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ | <input checked="" type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | |
| 20 Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | Հաղթող մասնակցի հետ 2017 թվականի ապրիլի 13-ին կնքվել է պայմանագիր, որի 11-րդ կետում աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է համաձայն տեխնիկական առաջադրանքում պատվիրատուի կողմից սահմանված ժամանակացույցի՝ 365 օր: Պայմանագիրը գտնվում է կատարման փուլում: |
| 21 Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին | <input type="checkbox"/> | <input type="checkbox"/> | <input checked="" type="checkbox"/> | Ընկերությունը շուկայի ուսումնասիրության տվյալներ չի ներկայացրել: |